

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՀԱՌԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՄՇԱԿԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՌԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԼԱՆԴ ՆԱԶԱՐԵԹՅԱՆԸ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի
ԹԻՎ 24 Ն ՈՐՈՇՄԱՄԲ

Գ. Հառիճ 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Շիրակի մարզի Հառիճ համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Շիրակի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Հառիճ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Հառիճ համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված են Հառիճ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶՀԾ-ն ներառում է նաև Հառիճ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Հառիճ համայնքի համայնքի ներդաշնակ և

համաչափ զարգացման, Հառիճի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՀՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հառիճ գյուղը Շիրակի մարզի դարերի պատմություն ունեցող համայնքներից է, որը նախկինում կոչվել է Ղփչաղ: Հառիճ վերանվանվել է 1946 թվականին: Հառիճ գյուղը ունի 1400 տարվա պատմություն: Գտնվում է ՀՀ Շիրակի մարզում, Արթիկի տարածքշրջանում, Արթիկ քաղաքից 3-4 կմ հարավ-արևելք մարզկենտրոնից 22 կմ հեռավորության վրա: Նախկինում եղել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ, Արագածի արևմտյան լանջին, սարավանդակի վրա՝ ծովի մակարդակից 2020մ բարձրության վրա: Գլխման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուշեղ քամիներ հաճախակի են ձնաբուքերը և սառնամանիքները: Ամառը տաք է համեմատաբար խոնավ:

Հառիճը հարուստ է պատմաճարտարապետական արժեքներով՝ հարավում գտնվում է համեմատաբար խոշոր բրոնզեդարյան բնակատեղի՝ բաղկացած մի շարք մշակույթային կառույցներից, որոնք պատկանում են մ.թ.ա 3-րդ հազարամյակից մինչև մ.թ. 10-րդ դարը: Գյուղի տարածքում գտնվում է հին եկեղեցու, գերեզմանների, ավերակներ: Գյուղից մոտ 2 կմ հյուսիս-արևմուտք՝ <Քարոտ հողեր> կոչվող դաշտում հայտնաբերվել են միջին բրոնզի դարի դամբարաններ, խեցեղեն առարկաներ: Գյուղում գտնվում է միջնադարյան Հառիճի վանքը՝ ամենահին շինությունը 7-րդ դարում կառուցված Ս. Գրիգոր եկեղեցին է: Նրան կից կան 13-րդ դարում կառուցված երկհարկանի աղոթարաններ: Վանքի գլխավոր եկեղեցին կառուցել է Զաքարե և Իվանե եղբայրների հրամանով 1201 թվականին, այն խաչաձև գմբետավոր մեծաչափ կառույց է:

Բնակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում անասնապահությունը, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են մեղվապահությամբ:

1960-ական թվականներից հետո համայնքի աշխատունակ բնակչության որոշակի մասը աշխատել է Արթիկի գորգագործական արտադրամասում , Վակումային վառարանների արտադրական ձեռնարկությունում, Արթիկտուֆ քարի արտադրության ձեռնարկությունում, շինարարական, արտադրական և գյուղատնտեսական այլ կազմակերպություններում:

Սակայն գյուղատնտեսական և արդյունաբերական նշված ձեռնարկությունները ներկայումս չեն գործում և համայնքի աշխատունակ բնակչության հիմնական մասը զբաղված է գյուղացիական տնտեսությամբ, տուֆ քարի արտադրության և վերմշակման փոքր ձեռնարկություններում ու

արտագնա աշխատանքով: Վերջին 20 տարիների ընթացքում արտագնա աշխատանքի բերումով համայնքից գաղթել են ավելի քան 20 ընտանիքներ:

Բնակավայրն իր զարգացումն հիմնականում ապրել է հետպատերազմյա ժամանակաշրջանում: Գյուղում կառուցվել է ակումբ, գրադարան, բուժ. կետ, խանութներ, բաղնիք, կենցաղի տուն, բնակելի տներ, անասնապահական և գյուղատնտեսական նշանակության տասնյակ օբյեկտներ: Կայուն տնտեսական աճ է ունեցել Հառիճի սկզբնական շրջնում՝ կոլեկտիվ, ապա խորհրդային տնտեսությունը: Այն աչքի է ընկել հատկապես հացահատիկի և մսի արտադրության բարձր ցուցանիշներով:

Գյուղի վարելահողերի գերակշռող մասը լեռնատափաստանային սևահողեր են, որի ոռոգման, պարարտացման և ագրոտեխնիկական կանոնների ճիշտ կիրառման դեպքում կարող է ապահովվել հացահատիկի և բանջարաբոստանային մշակաբույսերի կայուն և բարձր բերքատվություն:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տվել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Գյուղում գործում է 1400-ամյա դպրոցը: Իր գոյության տարբեր դարաշրջաններում պատմագրել է բազմաթիվ նշանավոր անուններ: Այստեղ սովորել, աշխատատեղ ու գործել են այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը/7-րդ դար/, Վարդան Արևելցի, Սամուել ու Մխիթար Անեցի պատմիչները, Ավ. Իսահակյանը, Ղ. Աղայանը, մեծ երգահան Կոմիտասը, Երեմիա երաժշտագետը և շատ ուրիշներ:

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Ը/Ը	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	1541
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	401
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	0
2.2	կիսակառույց տներում բնակվող	47
3.	Ընտանեկան՝ նպաստ ստացող ընտանիքների քանակը	2145

Համայնքի բնակչության 49.7% կազմում են տղամարդիկ և 50.2% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.10.2016 թ. Դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	1541	775	766
	մինչև 1 տարեկան	12	7	5
	1-2 տարեկան	32	17	15
	3-4 տարեկան	42	24	18
	5-6 տարեկան	44	28	16
	7-10 տարեկան	59	31	28
	11-14 տարեկան	58	28	30
	15-17 տարեկան	41	19	22
	18 և ավելի տարեկան	1253	621	632
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	150		
3.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	14	7	7
4.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	0	0	0
5.	Հաշմանդամ երեխաներ	3	1	2
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	3	2	1
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	1	-	1
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	20	1	20
9.	Հաշմանդամներ	65	36	29
10.	Զբաղվածներ	720		
11.	Գործազուրկներ	250		
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	47		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	2		

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

2.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանու հինգ անդամներ և համայնքի ղեկավար:

<Տեղական ինքնակառավարման մասին> և <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

Աղյուսակ 3. Հատիճ համայնքի աշխատակազմը

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մատվ նաև ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
1.	Համայնքի ղեկավար	1	1	172000

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
2.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	99000
3.	Գլխավոր մասնագետ-ֆինանսիստ(2.3-1)	1	թափուր	97000
4.	Գլխավոր մասնագետ (2.3-2)	1	1	97000
5.	1-ին կարգի մասնագետ (3.2-1)	1	1	96000
6.	2-րդ կարգի մասնագետ (3.3-1)	1	թափուր	92000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
7.	Գանձապահ	1	1	82000
8.	Համակարգչային օպերատոր	1	1	92000
9.	Աղբահանող բանվոր	1	1	72752
	Ընդամենը	9		727752

Հառիճ համայնքի ենթակայության տակ գործում են՝

Աղյուսակ 4. <Հառիճի նախադպրոցական ուսումնական հաստատություն> ՀՈԱԿ

1	Հիմնարկի տնօրեն	1	1	72752
2	Հաշվապահ	1	0.5	72752
3	Դաստիարակ	1	1	86250
4	Խոհարար	1	0.75	72752
5	Դայակ, հավաքարար	1	0.5	72752
	Ընդամենը	5		377258

Աղյուսակ 5. <Հառիճի արվեստի դպրոց> ՀՈԱԿ

1	Հիմնարկի տնօրեն	1	1	72752
2	Հաշվապահ	1	1	77904
3	Հավաքարար	1	1	74000
4	Փականագործ բանվոր	1	0.75	99000
5	Մանկավարժ	1	0.75	83300
6	Մանկավարժ	1	0.25	83300
7	Մանկավարժ	1	0.61	83300
8	Մանկավարժ	1	0.75	97000
9	Մանկավարժ	1	0.5	97000
	Ընդամենը	9		767556

Աղյուսակ 6. <Մշակույթի տուն> ՀՈԱԿ

1	Հիմնարկի տնօրեն	1	1	78000
2	Հաշվապահ	1	0.75	90270
3	Գեղմասվար	1	0.75	90270
4	Տնտեսվար էլեկտրիկ	1	0.75	90270
5	Գրադարանավար	1	0.75	83710
	Ընդամենը	5		432520

Հառիճ համայնքի ավագանին ընտրվել է 2016թ-ի հոկտեմբերի 2-ին, կազմված է 5 անդամից

h/h	Անուն, ազգանուն	Ծննդյան տարեթիվ	Կրթությունը	Մասնագիտություն.
1	Հակոբ Մինասյան	1951	Միջնակարգ	մալուխագործ
2	Զավեն Մանուկյան	1951	Բարձրագույն	անասնաբույժ
3	Ռաֆիկ Հակոբյան	1957	Բարձրագույն	Ուսուցիչ
4	Անդրանիկ Մնեյան	1962	Միջնակարգ	մեխանիզատոր
5	Արթուր Դավթյան	1969	Միջնակարգ	Մեխանիզատոր

2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Աղյուսակում բերված է 24.11.2016թ. դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը:

N	Գույքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Տեխնիկական վիճակի բնութագիր
1	Գյուղապետարանի շենք	հատ	1	Ենթակա են նորոգման
2	Մշակույթի տուն	հատ	1	Ենթակա է հիմնանորոգման
3	Մանկապարտեզի շենք	հատ	1	Ենթակա են նորոգման
4	Խմելու ջրի ներտնտեսային համակարգ	կմ	25	Ենթակա է նորոգման
5	Գրադարանի գրքային ֆոնդ	հատ	4000	Ենթարկված է ֆիզիկական մաշվածության
6	Հուշարձան	հատ	1	Ենթակա է նորոգման
7	Գերեզմանատուն	հատ	1	
8	Ներհամայնքային ճանապարհներ	կմ	30	Ենթակա է նորոգման
9	Բուժ մանկաբարձական կետ	հատ	1	Ենթակա է նորոգման
10	Գրասենյակային գույք և տեխ. միջոցներ և սարքեր	*	*	Բավարար

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հառիճ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 12-ի N 23-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **34515.5** հազար դրամ, ծախսերի գծով՝ **34515.5** հազար դրամ: Հառիճ համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 18-ի թիվ 2-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (նշտված բյուջե) և՛ եկամտային, և՛ ծախսերի մասով մնացել է նույնը: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **15.45%**՝ **5332.4** հազար դրամ:

2.5 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն են: Ոռոգման ջրի բացակայության պատճառով համայնքը լուրջ դժվարությունների առաջ է կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու հարցում:

Համայնքում կազմավորված են 399 գուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 262 հա վարելահող: Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, մասամբ կարտոֆիլի, կաղամբի և բանջարա- բոստանային այլ կուլտուրաների արտադրությամբ: Արտադրության արդյունավետությունը կախված է բնակլիմայական բարենպաստ պայմաններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են երաշտով և կարկտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 25-30 ցենտներ: Երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կազմում է 50-100%:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Աղյուսակ 7 Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը

Հողատեսքի անվանումը	2016թվական	
	Քանակը /հա/	Որից օգտագործվում է /հա/
Ընդամենը գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	4116.54	967
Վարելահող	327.26	327.26
Բազմամյա տնկարկներ	0.0	0.0
Խոտհարքներ	0.0	0.0
Արոտավայրեր	3094.36	667
Այլ գյուղատնտեսական հողեր	694.92	0.0

Աղյուսակ 8.Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը

	Ցանկատարածությունների կառուցվածքը	2016 թվական		%–ը վարելահողերի ընդհանուր քանակի նկատմամբ /327.26հա/
		Քանակը /հա/	Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը /բերքատվություն/ տոննա	
1.	Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում՝	207	2.0	63.2
	Ցորեն	107	2.0	32.7
	Գարի	100	2.0	30.5

	Այլ հացահատիկային մշակաբույսեր	0.0	0.0	0.0
2.	Ընդամենը կերային մշակաբույսեր, այդ թվում՝	70	2.0	21.4
	Կորնզան	30	2.0	9.2
	Առվույտ	40	2.0	12.2
3.	Ընդամենը բանջարաբոստանային մշակաբույսեր, այդ թվում՝	0.0	0.0	0.0
	Կարտոֆիլ	0.0	0.0	X
	Կաղամբ	0.0	0.0	X
	Գազար	0.0	0.0	X
	Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	0.0	0.0	X
4.	Այլ /ցեղ /	50.26		15.4
	ԸՆԴԱՄԵՆԸ	327.26	X	100.0

Աղյուսակ 9 Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը /բերքատվություն/

Մշակաբույսի տեսակը	2016 թվական
Հացահատիկ	
Ցանկատարածքը /հա/	207
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	2.0
Համախառն բերքը/տոննա/	540
Կերային մշակաբույսեր	
Ցանկատարածքը	70
1 հեկտարի միջին բերքատվությունը	2.0
Համախառն բերքը	140
Կարտոֆիլ	
Ցանկատարածքը	0.0
1 հեկտարի միջին բերքատվությունը	0.0
Համախառն բերքը	0.0
Կաղամբ	
Ցանկատարածքը	0.0
1 հեկտարի միջին բերքատվությունը	0.0
Համախառն բերքը	0.0
Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	
Ցանկատարածքը	0.0
1 հեկտարի միջին բերքատվությունը	0.0
Համախառն բերքը	0.0

Աղյուսակ 10. Անասնազրկաքանակը

		/գլուխ/
Գյուղատնտեսական կենդանիների տեսակները		01.01.2016թ.
Խոշոր եղջերավոր անասուններ		730
որից՝ կովեր		314
Խոզեր		63

ոչխարներ և այծեր	430
թռչուններ	1786
մեղվաբնասանիքներ	32

Աղյուսակ 11 Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	2016 թվական
Մթերատվությունը	
Մեկ պայմանական գլուխ խոշորի մթերատվությունը, կգ	100
1 կովի կաթնատվությունը /լիտր/	1200
1 ոչխարի բրդատվությունը /կգ/	2
1 հավի ձվատվությունը /հատ/	150
1 մեղվաբնասանիքի մթերատվությունը /կգ/	12.0
Արտադրության ծավալները	
Մսի արտադրություն /տոննա/	15.5
Կաթի արտադրություն /տոննա/	400
Բրդի արտադրություն /տոննա/	1.0
Չվի արտադրություն /հազ. հատ/	200
Մեղրի արտադրություն /կգ/	750

Աղյուսակ 12. Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ

Գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների անվանումը	Չափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	4
Անվավոր տրակտոր	հատ	7
Հացահատրկային կոմբայն	հատ	-
Խոտհնձիչ կոմբայն	հատ	2
Բեռնատար ավտոմեքենա	հատ	18
Տրակտորային կցասայլ	հատ	4
Գութան	հատ	4
Կուլտիվատոր	հատ	4
Շարքացան	հատ	2
Հակավորող մեքենա	հատ	2
Կերամանրիչ մեքենա	հատ	1

Գյուղատնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա պահեստամասերի մեծ պահանջարկ:

Աղյուսակ13 . Հողատարածքներ

Ը/Ը	Հողատեսքը	Հեկտար
1.	Համայնքի վարչական տարածքը	4454.64
2.	Գյուղատնտեսության նշանակության	4116.54
2.1	վարելահող	327.26
	այդ թվում	
2.2	Սեփականաշնորհված	315.69
2.3	Համայնքային սեփականություն	11.57
2.4	արոտավայրեր	3094.36
2.5	Այլ հողատեսքեր	964.92
3	Բնակավայրի հողեր	149.55
4	Հանքավայրերի հողեր	138.22
5	Ճանապարհների տակ օգտագործվող հողեր	9.13
6	Պատմամշակութային նշանակության հողեր	25.72
7	Ջրային ֆոնդի հողեր	4.65
8	Հատուկ նշանակության հողեր	9.62
	Սեփականաշնորհված մեկ հողաբաժնի չափը կազմում է՝	0.65

2.6 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 1990 թվականը համայնքի աշխատունակ բնակչության 20 տոկոսը զբաղվածություն են ունեցել «Արթիկտուֆ», «Տուֆաբլուկների» ձեռնարկությունում:

Ներկայումս համայնքի տարածքում գործում են տուֆ քարի արտադրության և խարամի վերամշակման ընդամենը 1 ընկերություն, որի գործունեությունը արտադրական թույլ կարողությունների պատճառով ունի սեզոնային բնույթ: Քարի արտադրությունում և վերամշակման արտադրամասում համայնքից զբաղված են ընդամենը 15 մարդ:

Համայնքում առկա է տուֆ քարի մեծ պաշարներ: Անհրաժեշտ ներդրումներ կատարելու դեպքում տուֆ քարի արտադրությունը և վերամշակումը կարող է զարգանալ և զբաղվածություն ապահովել ինչպես Հառիճի, այնպես էլ հարևան համայնքների աշխատունակ բնակչության համար:

Համայնքում կարող է զարգանալ նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակաման ճյուղը /մսամթերքի և կաթի վերամշակում/:

2.7 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Հառիճ համայնքը ունի բազմաթիվ պատմամշակութային արժեքներ, որի շնորհիվ կաելի է զարգացնել զբոսաշրջությունը.

- 5,7,12-րդ դարերի եկեղեցին, այժմ գործում է Թրբանճյանի անվան Հառիճավանքի հոգևոր ընծայարանը, որտեղ սովորում են շուրջ 40 սաներ:
- Ժայռի վրա կառուցված մատուռ
- Բրոնզեդարյան բնակատեղի, որը պատկանում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև մ.թ. 10-րդ դարը:
- Բազմաթիվ խաչքարեր
- Ժամանակաշրջանի արձաններ
- 1941-1945 թթ Հայրենական մեծ պատերազմում զոհված հուշարձանը
- Ունի մեծ քանակության բնական աղբյուրներ /Թագավորական գոլ, /

2.8 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի հանրակրթական մեկ դպրոց և նախադպրոցական ուսումնական հաստատություն:

1988թ-ի երկրաշարժից վթարային դարձած նախկին դպրոցական շենքի փոխարեն 1993 թվականին հապճեպ կառուցվեց նոր դպրոցական շենք: Իր պարզ, անշուք, ժամանակակից հարմարություններից զուրկ և անմխիթար վիճակում գտնվող շենքը չունի սանհանգույցներ, մարզադահլիճ: Վերջին տարիներին կատարվել է մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Դպրոցն ունի 23 - մանկավարժ և 4 սպասարկող անձնակազմ, մանկավարժներից 23-ն ունեն բարձրագույն կրթություն:

Աշակերտների բաշխումն ըստ դասարանների

N		Աշակերտների թիվը	Դպրոցում ընդգրկված աշակերտների թիվը ըստ տարիքային խմբերի			
			Մինչև 3-4 տարեկան		5-6 տարեկան	
1.	Նախադպրոցական ուսումնական	40	Տղա	Աղջիկ	Տղա	Աղջիկ
			10	8	13	9

	հաստատություն					
2.	Տարրական դպրոց /1-4-րդ դասարաններ/	46	Մինչև 7 տարեկան		7 տարեկանից բարձր	
			Տղա	Աղջիկ	Տղա	Աղջիկ
			9	8	16	13
3.	Միջին դպրոց /5-9-րդ դասարաններ/	39	Տղա		Աղջիկ	
			18		21	
4.	Ավագ դպրոց /10-12-րդ դասարաններ/	21	Տղա		Աղջիկ	
			12		9	
	Ընդամենը	146	78		68	
	Մանկավարժների թիվը		23			

Համայնքը ունի մշակույթի տուն և համայնքային կենտրոն: Սակայն մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում, չունի համապատասխան կահույք և սարքավորումներ: Տանիքը գտնվում անմխիթար վիճակում: Համայնքային կենտրոնում համայնքի բնակիչները ձմռանը անցկացնում են իրենց հանգիստն ու ազատ ժամանակը:

2.9 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է Արթիկի առողջության կենտրոնի, և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցով: Աշխատում է 1 բուժ քույր: Համայնքի բուժ. մանկաբարձական կետը մասնակի նորոգվել է 2005 թվականին Հայաստանում ԱՄՆ դեսպանատան <<ՆՈՎԱ>> ծրագրի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրումների շնորհիվ:

2.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սան մաքրումը:

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- Ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները,
- բարեկարգել զբոսայգիները,
- կառուցել կենտրոնացված աղբավայր,
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում տեղադրել աղբամաններ,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող

սեմինարների, դասընթացների, տեսագրվագրերի, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

2.11 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում և բնակավայրերի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

2.12 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Հառիճ համայնքի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղաքացիական պաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ: Բնակավայրերում եղած թաքստոցները հաճախված են համայնքապետարանի կողմից:

4. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Հառիճը գալիք 2017-2021թթ. Ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- Գյումրի քաղաքի հետ, որը համարվում է տարածաշրջանային կենտրոն, մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում՝ համագործակցությանն էր գրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպությունների:
- Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչ ընթացիկում է, օրինակ պարարտանյութերի, սերմացուների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ:
- Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում, պատասպարանների և թաքստոցների կառուցում:

ՋԱՐԳԱՅՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն մախադայրոցական հիմնարկը, մշակույթի շենքը, բակային տարածքները.
- գործագրության բարձր մակարդակը, սոցիալապես անապահով և ծայրահեղ աղքատ բնակչության բարձր տոկոսը, ցածր աշխատավարձի առկայությունը
- համակարգի մաշվածությունը
- խմելու ջրի ներտնտեսային ցանցի քայքայվածությունը
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից
- հակակարկտային կայանների բացակայությունը

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Տուֆ քարի, շիրարարական ավազի առկայություն
- Աշխարհագրական դիրք
- Պատմամշակութային առկայություն
- Խմելու ջրի առկայություն
- Գյուղի վարչական տարածքի 60 %-ով գազաֆիկացված է:
- Առկա են հեռուստակայանը, հեռախոսակապը, բջջային կապի 3 օպերատոր, առևտրի հիմնական օբյեկտները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ոռոգելի վարելահողերի բացակայությունը
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները
- Հակակարկտային կայանների բացակայություն
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները
- Գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները
- Գյուղտեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը
- Մշակույթի տան անբարեկարգ վիճակը
- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի քայքայվածությունը
- Գործազրկության բարձր մակարդակը
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից
- Աշխատատեղերի պակաս

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տուֆ քարի հանքավայրերի շահագործման ծավալների ավելացման և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում
- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքով գյուղատնտեսական նպատակային վարկերի տրամադրման և սուբսիդավորման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, դյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացում, վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնադրում
- Համայնքում առկա պատմամշակութային աշխարհի շնորհիվ տուրիզմի զարգացում
- Մեծ ծավալով ջրի ամբարման հնարավորություն / եթե կառուցվի ջրամբար/:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները / բարձր լեռնային
- Ոռոգման ջրի համակարգի մաշվածությունը
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից
- Բնակչության ցածր պայմանները

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Հառիճ համայնքը տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Գյուղի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և, հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը և ունենալով պատմամշակութային բազմաթի հուշարձաններ, մաքուր ջուր, համայնքը դարձնել առողջարանային գոտի և տուրիզմի զարգացման կենտրոն, մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	23%	21,5%	19,2%	17%	15,3%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով	2%	0.36%	0.2%	0.2%	0.2%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	1,5%	1.8%	2%	2,3%	2.5%

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

Գյուղը հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ և մրցունակ:

- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները
- ✓ Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը
- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական **նպատակներն են՝**

- ✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- ✓ Բարելավել համայնքապետարանի և վարչական ներկայացուցիչների նստավայրերի շենքային և գույքային պայմանները
- ✓ Բարձրացնել նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը
- ✓ Բարելավել խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը
- ✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից
- ✓ Համայնքը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ զբոսաշրջիկների համար
- ✓ Ունենալ բազմաֆունկցիոնալ կանգառներ
- ✓ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը
- ✓ Համայնքի բնակիչներին և զբոսաշրջիկներին ապահովել նրանց հանգստի կազմակերպման, շփումների ապահովման հաճելի պայմաններով
- ✓ Ունենալ բարեկարգ և մարմնամարզական գործիքներով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածքներ
- ✓ Ունենալ բարեկարգ զբոսայգիներ
- ✓ Ստեղծել համայնքում հանդիսություններ կազմակերպելու բավարար պայմաններ
- ✓ Արդյունավետ օգտագործել ոռոգման ջրի պաշարները

- ✓ Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ
- ✓ Նպաստել կենդանիների մթերատվության բարձրացմանը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական ծրագրերն են՝

- ✓ Շիրակի մարզի Հառիճի <Մշակույթի տուն հիմնարկ> ՀՈԱԿ շենքի վերանորոգում և կահավորում:
- ✓ Համայնքի Խմելու ջրագծի վերանորոգում
- ✓ Համայնքի ոռոգման ցանցի նորոգում
- ✓ Համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում:
- ✓ Համայնքի միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում
- ✓ Համայնքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հառիճում գալիք 2017-2021թթ. ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում:
- Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում, պատասպարանների և թաքստոցների կառուցում:

Պլանավորվող հինգ տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Շիրակի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ:

2.	Հայտարարել մրցույթ և ընտրել կապալառուին				x	x							
3.	Իրականացնել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքները					x	x	x					
4.	Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել հանդիսությունների							x	x				
5.	Գույքի ձեռք բերում									x	x		
6.													
7.													

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ակտիվացում, միջոցառումների կազմակերպում, համերգների, թատրոնների կազմակերպում

Կապը այլ ծրագրերի հետ

Այս ծրագիրը կապված է համայնքային մյուս ծրագրերի հետ

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի եկամուտները

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամեն ը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	30000.0					30000.0
1.	Համայնքի բյուջեի մուտքեր	5000.0					5000.0
	- Վարչական բյուջե						
	- Ֆոնդային բյուջե	5000.0					5000.0
2.	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	25000.0					25000.0
	- Այլ պետությունների համայնքներից						
	- Միջազգային կազմակերպություններից						
3.	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ						
	- Պետական բյուջեից այլ դոտացիաներ						
	- Պետական բյուջեից նպատակային						

	հատկացումներ						
	- ՀՀ այլ համայնքներից պաշտոն. դրամաշնորհներ						
4.	Պետական բյուջեից վարկ						
5.	Առևտրային բանկից վարկ						
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից						
7.	Մասնավոր (բիզնես) հատվածի ներդրումներ						
8.	Բնակչության ներդրումներ						
9.	Այլ						

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					Ընդամեն ը
		2017	2018	2019	2020	2021	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝	30000.0					30000.0
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	5000.0					5000.0
1.1	Աշխատանքի վարձատրություն, որից - Աշխատավարձեր և հավելավճարներ						
1.2	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում, որից						
	- Գործառն. և բանկային ծառայությունների ծախսեր						
	- Էներգետիկ ծառայություններ						
	- Կոմունալ ծառայություններ						
	- Կապի ծառայություններ						
	- Ապահովագրական ծախսեր						
	- Գույքի և սարքավորումների վարձակալություն						
	- Ներքին գործուղումներ						
	- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր						
	- Այլ տրանսպորտային ծախսեր						
	- Վարչական ծառայություններ						
	- Համակարգչային ծառայություններ						
	- Աշխատակազմի մասնագ. զարգ. ծառայություններ						
	- Տեղեկատվական ծառայություններ						
	- Կառավարչական ծառայություններ						
	- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ						
	- Ներկայացուցչական ծախսեր						
	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ						
	- Մասնագիտական այլ ծառայություններ						
	- Շենքերի և կառ.-ի ընթացիկ նորոգում և պահպանում	5000.0					5000.0
	- Մեքեն. և սարք.-ի ընթացիկ նորոգում և պահպանում						
	- Գրասենյակային նյութեր և հագուստ						
	- Գյուղատնտեսական ապրանքներ						
	- Վերապատրաստման և ուսուցման նյութեր						

	- Տրանսպորտային նյութեր						
	- Շրջակա միջավայրի պահպ.-ան և գիտական նյութեր						
	- Առողջապահական և լաբորատոր նյութեր						
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր						
	- Հափուկ նպարակային այլ նյութեր						
1.3	Տոկոսավճարներ						
1.4	Սուբսիդիաներ, այդ թվում						
	- Սուբսիդիաներ պետական (համայնքային) կազմ.-ին						
	- Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) կազմակերպություններին						
1.5	Դրամաշնորհներ, այդ թվում						
	- Ընթացիկ դրամաշնորհներ						
	- Կապիտալ դրամաշնորհներ						
1.6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ						
	- Սոցիալական ապահովության նպաստներ						
	- Սոցիալական օգնության նպաստներ						
	- Կենսաթոշակներ						
1.7	Այլ ծախսեր						
	- Նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին						
	- Այլ ծախսեր						
	- Պահուստային միջոցներ						
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	25000.0					25000.0
1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում	25000.0					25000.0
	Շենքեր և շինություններ, որից						
	- Շենքեր և շինությունների ձեռքբերում						
	- Շենքեր և շինությունների կառուցում						
	- Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում						
	Մեքենաներ և սարքավորումներ, որից						
	- Տրանսպորտային սարքավորումներ						
	- Վարչական սարքավորումներ						
	- Այլ մեքենաներ և սարքավորումներ						
	Այլ հիմնական միջոցներ						
1.2	Պաշարներ						
1.3	Բարձրարժեք ակտիվներ						

ԾՐԱԳԻՐ 2

Խմելու ջրագծի վերանորոգում

Հաղիճի համայնքապետարան

Ծրագրի ընդհանուր արժեքը 25 մլն. դրամ

Ծրագրի տեսակը կամ գտնվող ապրանքը

- ✓ Վերականգնում
- ✓ Ընդլայնում
- ✓ Փոխարինում

Ծրագրի հիմնավորումը

Յանցը քայքայված է, գտնվում է անմխիթար վիճակում: Առկա է ջրի մեծ կորուստ: Սպասարկումը դառնում է անկառավարելի:

Ծրագրի նպատակները

Ջրի կորուստների նվազում: Ունենալ մաքուր և շուրջօրյա ջուր:

Ծրագրի խնդիրները

- ✓ Նախապատրաստել խմելու ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- ✓ Հայտարարել մրցույթ, ընտրել կապալառուին
- ✓ Իրականացնել խմելու ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել ոռոգման ջրի

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

[illegible]

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Կարգավորել 30 կմ հատվածի, առանց շեղումների, ջրի սպասարկում: Սպասարկել մաքուր առանց կորուստների ջուր, ունենալ շուրջօրյա ջրամատակարարում:

Կապը այլ ծրագրերի հետ

Այս ծրագիրը կապված է համայնքային մյուս ծրագրերի հետ

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի եկամուտները

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		10000.0	10000.0	5000.0		25000.0
1.	Համայնքի բյուջեի մուտքեր		2000.0	2000.0	1000.0		5000.0
	- Վարչական բյուջե		2000.0	2000.0	1000.0		5000.0
	- Ֆոնդային բյուջե						
2.	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ		8000.0	8000.0	4000.0		20000.0
	- Այլ պետությունների համայնքներից						
	- Միջազգային կազմակերպություններից		8000.0	8000.0	4000.0		20000.0
3.	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ						
	- Պետական բյուջեից այլ դոտացիաներ						
	- Պետական բյուջեից նպատակային հատկացումներ						
	- ՀՀ այլ համայնքներից պաշտոն. դրամաշնորհներ						
4.	Պետական բյուջեից վարկ						
5.	Առևտրային բանկից վարկ						
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից						
7.	Մասնավոր (բիզնես) հատվածի ներդրումներ						
8.	Բնակչության ներդրումներ						
9.	Այլ						

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝		10000.0	10000.0	5000.0		25000.0
Ա.	ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝		2000.0	2000.0	1000.0		5000.0
1.1	Աշխատանքի վարձատրություն, որից						
	- Աշխատավարձեր և հավելավճարներ						
1.2	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում, որից						
	- Գործառն. և բանկային ծառայությունների ծախսեր						
	- Էներգետիկ ծառայություններ						
	- Կոմունալ ծառայություններ						

	- Կապի ծառայություններ					
	- Ապահովագրական ծախսեր					
	- Գույքի և սարքավորումների վարձակալություն					
	- Ներքին գործուղումներ					
	- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր					
	- Այլ տրանսպորտային ծախսեր					
	- Վարչական ծառայություններ					
	- Համակարգչային ծառայություններ					
	- Գյուղատնտեսական ապրանքներ					
	- Վերապատրաստման և ուսուցման նյութեր					
	- Տրանսպորտային նյութեր					
	- Շրջակա միջավայրի պահպ.-ան և զիտական նյութեր					
	- Առողջապահական և լաբորատոր նյութեր					
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր					
	- Հատուկ նպատակային այլ նյութեր					
1.3	Տոկոսավճարներ					
1.4	Սուբսիդիաներ, այդ թվում					
	- Սուբսիդիաներ պետական (համայնքային) կազմ.-ին					
	- Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) կազմակերպություններին					
1.5	Դրամաշնորհներ, այդ թվում					
	- Ընթացիկ դրամաշնորհներ					
	- Կապիտալ դրամաշնորհներ					
1.6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ					
	- Սոցիալական ապահովության նպաստներ					
	- Սոցիալական օգնության նպաստներ					
	- Կենսաթոշակներ					
1.7	Այլ ծախսեր					
	- Նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին					
	- Այլ ծախսեր					
	- Պահուստային միջոցներ					
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՄԵՐ, այդ թվում՝	2000.0	2000.0	1000.0		5000.0
